Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 202-Ա ԵՎ 216-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 202-Ա որոշման N 1 հավելվածում անհրաժեշտ է «2018 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 202-Ա որոշման» բառերն ու թվերը փոխարինել «2012 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 169-Ա որոշման» բառերով ու թվերով:

Որոշման N 2 հավելվածից անհրաժեշտ է հանել «Հավելված N2 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 202-Ա որոշման» բառերն ու թվերը:

Թիվ 216-Ն որոշման հավելվածում նախատեսված չեն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին 2018 թվականի սեպտեմբերի 18-ի ՀՕ 382-Ն), ինչպես նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին 2018 թվականի հունվարի 15-ի ՀՕ 41-Ն) լրացումները:

Բացի այդ որոշման հավելվածի 11-րդ կետով՝ տնային կենդանիներ պահելու թույլտվության համար սահմանված դրույքաչափը չի համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված դրույքաչափին:

Նույն հավելվածի 13-ից 17-րդ կետերով սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերի նկատմամբ գործակիցներ չեն կիրառվել (հիմք «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

16.01.2020թ.